



ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԹԻԻ Թ.

1869

ՅՈՒՆՈՒԱՐ

Նոր Տարի շնորհաւոր, Նոր Ոգի բեղմնաւոր

Բոլորեցաւ և 68 թուականը և յաջորդեց 69 ը: Ուստի փառք և գոհութիւն Ղառուծոյ ամենակալին ողորմութեան՝ որ այս նոր տարուան մուտքը ևս տեսանելու արժանացուց զմեզ: Այս ամսն որոյ բարեմաղթենք զայն միմեանց, ինչպէս նա և Ղառաւորը կը խնդրէ յերկնից՝ իւր որդւոց՝ շնորհաւոր նոր տարի:

Բայց սակայն պէտք չէ այսքանով բաւականանալ և լոկ ուրախանալ, որ

տարի մի ևս սահեցաւ և նորը յաջորդեց:

Հապա Ղառաւոր կ'ըլձանայ իւր մի կարեւոր խորհրդածութիւն՝ այսու բարեպատեհ առթիւ՝ իւր սիրելի և հարազատ որդւոց ու շաւրութեան յանձնել:

Արդեկային կեանքը քան զանիւ անընդհատ հոլովմամբ՝ կ'ընթանայ դէպ ի պէս կէտը, ուր՝ մարդկութիւնը անտարակոյս՝ իւր առժամանակեայ հանգիստը ցարդ գտած է և հարկ է որ գտանէ:

և 'ի սկզբանէ մինչև ցարդ՝ բաց 'ի Լ, նովբէն և Լ, զիայէն, ոչ ոք չէ կարողացած այս կէտէն խուսափել կամ ազատ մնալ, և իբրև անհրաժարելի պարտք տիրավճիւ՝ իւրաքանչիւր ոք՝ մինչև անգամ անբաններն իսկ, պէտք է դիմեն յայն ըստ նախասահման տնօրէնութեան Ստեղծողին տարւոյ և ժամանակի:

Սերբն մարդիկ աշխարհիս վերայ իբրև հիւր են, և նոցա կեանքը կը նմանի խոտին, որ այսօր կը կանաչանայ, և 'ի վաղիւն խորշակահար կը թուռնի:

Լ, թէ այսպէս է, ուրեմն ի՞նչ նշանակութիւն ունի այն ուրախութիւնը, որ նոր տարւոյ առթիւ կը ծագի իւրաքանչիւր մարդկանց սրտին մէջ. և փոխանակ տրտմելու՝ որ օր աւուր իւրեանց կենաց թելը կը կարճի, որով և կը յառաջանան դէպ 'ի գերեզման, ընդ հակառակն տարեգլխոյն կ'զուարճանան:

Սէ կարելի ասել, և թէ՛ պէտք չէ մխիթարուիլ և ուրախանալ, բայց ի՞նչ պատճառներով և նպատակաւ — արդեօք՝ նորա համար՝ որ անցեալ տարին աշխարհային վայելչութիւնք՝ իմա, անձնական անօգուտ պիտոյից և պճնասիրութեանց շոյլութեամբ, չար կրիչ և ցանկութեանց յագմամբ, զանազան զբօսանքներով և զուարճութեամբք կենցաղավարելով, աղքատը զրկելով և քսակը լեցնելով (որ զանձն խաբել է), կամ բաղդին բերմամբ հարստանալով, բարձր աստիճաններու հասնելով, վաղանցիկ պարծանքներու հանդիպելով, միով բն-

նիւ՝ ինչ որ բողբոլի՝ մարմնոյ հաճոյք միանգամայն և աննշան մանաւանդ. թէ անտի են, զայնս վայելելով անցուցին իւրեանց կենաց մի շրջանն ևս: — Եւ կամ նորա համար արդեօք, որ իւրեանց բաղդին ներհակ բերմունքը անկարողանալով ուրախութեան փոխարկել, ազդի ազգի արկածից պատահելով, հիւանդութիւն, սիրեւեաց կորստեան սգով քիւրեանց հարստութեանց կորուսմամբ և կերպ կերպ վնասուելով, մի խաբով ցաւօք և հեծութեամբ կնքեր են անցեալ տարին: — Սւտի և կը յուսան յառաջակայ ամի կամ առաւել ևս ուրախ և զուարթ օրեր տեսնել, որպիսի և իցէ կամաց և մտաց յաջողութեամբք երազել և ըստ ըզմից իւրեանց տնօրինել, վերջապէս՝ անձն իմ, կեանք իմ, ասելով, իւր կեանք 'ի զուր վատնել — և կամ առանց արկածից և վատ բաղդի հակառակ բերմանց, առանց ցաւոց՝ հիւանդութեց՝ հեծութեց և սգոց պատահման՝ վարել անցաւոր և առօրեայ հանգիստ կեանքը:

Ս, յսպէս կամ այնպէս՝ զիարդ և իցէ, միանգամայն արժան է գիտել որ, սոցա ամենն ևս որպէս հովանի փութանցիկ դէպքեր են, որոցմէ մարդկութեան ոչ հոգւոյն և ոչ մարմնոյն օգուտներ բաղել անհնարին է, թէպէտ աշխարհասէրք ոմանք կը կարծեն թէ կարելի է օգուտ մի բաղել, բայց 'ի զուր է և կը խաբուին չարաչար:

Սերբն ի՞նչպէս պէտք է ուրախանալ և մխիթարուիլ — և ի՞նչ ընելու է —

Մ. յո՛ւ պէտք է ուրսխանալ և յայն-
 ժամ մխլթարուիլ այնպիսի գեղեցիկ և
 օգտաւէտ ու արժանագով սիրագոր-
 ծութեանց խորհրդածութեամբք, եթէ
 անցեալ տարին՝ իրենց համար բարեգոր-
 ծութեան չհանդիսարան եղած է. յո-
 րում և Մ. զգային և կրօնական փառաց
 և պարծանաց համար հոյակապ կոթող-
 ներ կանգնած են. և ՚ի փոխարէն թէ
 շատ և թէ սակաւ երախտագէտներ ըս-
 տացած են :

Մ. հաւաստիկ այսքանով կ'բովանդակին
 ուրախութեան և մխլթարութեան ար-
 ժանի շարժառիթքը. որով կրկին վայել
 է բաղձալ յառաջակային աւաւել ևս
 զարգանալ և փայլել սոյնպիսի չքնաղ
 առաքինութեանց մէջ :

Եթէ՛ Հայե՛ր, սիրելի որդիք Մ. Բարա-
 տայ, անցած տարւոյն վրա դարձունէք
 Ձեր ուշադրութիւնը՝ կիմանաք աշխար-
 հիս վայելչութեանց և անցաւոր զբաղ-
 մանց ունայնութիւնը՝ որոնք անհետ ան-
 ցան ոչնչացան, և ուրիշ օգուտ չբերին
 բայց եթէ ոմանց պարապորդ դատար-
 կութիւն, այլոց հիւանդութիւն, ոմանց
 ևս մահ :

Ուրեմն հարկ է հաւատալ թէ՛ այն-
 պիսի գործքերու պէտքէ՛ ձեռնամուխ
 լինիլ, և այնպիսի օգտակար խորհուրդ-
 ներ յղանալ. որոնցմով կարող լինիք ոչ
 միայն Ձեր խեղճ և ցաւալի եղբարց
 բարեբարներ, Ձեր Մ. զգի մանկուոյն
 յառաջագիմութեան լուսաւորութեան
 և դաստիարակութեան խնամատար և

պաշտպան հանդիսանալ. ևս Ձեր Ս. Ե-
 կեղեցւոյ պայծառութե և փառաւորութե
 նախանձանդիւր և հարազատ որդիք լի-
 նիլ, այլ նա և Ձեր անուան անմահ յի-
 շատկաց արժանաւոր արձաններ կանգ-
 նէք. և ազգաց յազգս հռչակուի Ձեր
 սիրագործութեանց համբաւը և Ձեր
 ժառանգաց ևս բարի օրինակ թողուք յս
 պագային :

Մ. հաւաստիկ Ձեր գանձը գանձելու և
 սիրտը հանգիստ ու խիղճը հանդարտ պա-
 հելու պատկեր, որով ոչ գողերը կրնան
 մերձենալ Ձեր հարստութե, և ոչ ցե-
 դերը զայն վնասել, որով նա և կատարած
 կ'լինիք Ձեր անհրաժեշտ պարտքը առ
 Մ. տուած, առ Մ. զգ. և առ Ս. Եկեղե-
 ցի Հայաստանեայց :

Ուրեմն ՚ի մուտս այս նոր տարուան
 այժ՝ ուխտեցէք զարդարուիլ և պերճա-
 նալ ըստ վերոյիշելոց նոր ոգւոյ վաւ-
 վուռն եռանդով և զգացմունքներով.
 և ջանացէք սիրով զայն բեղմնաւորել ՚ի
 գործս. որով Մ. Բարատայ բարեմաղթութե
 և յորդորանաց սերմունքը ոչ ապառա-
 ժուտ և ամայի, այլ բերրի և արգաւանդ
 սրտից մէջ ցանուած կ'լինին և անշուշտ
 Ձեր ընթերցասիրութեամբը մէկ պըտ-
 ղոյն տեղը յիսուն՝ հարիւր և առաւել
 ևս կ'ընդունիք օժանդակութեամբ Մ. Թե-
 նակարողին Մ. տուածոյ. ող զի Մ. Բարա-
 տայ բարեմաղթութեանց և յորդորանաց
 խօսքերը ճշգրտէք, և Ձեր ընթերցասի-
 րութիւնը աւելացնելով՝ խրախուսէք
 և զմեզ քաջութեամբ յառաջ տանիլ

